

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ճանաչում ենք արդեօք կովկասցիներին.
—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յ՝, ձայն. Բանաստեղծ
հոգաբարձուների ընտրութիւնը. Մեր գաւառ-
ներից մէկը. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Թիֆլիսից. Արտաքին լուրեր. —ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ. Մանրանկար. —ՀԵՌԱՊԵՐԵՐ. —ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍՏԵՂԵՐ. Ցու-
ցահանդէսից:

ՀԱՆԱՉՈՒՄ ԵՆՔ ԱՐԾՐՈՒՄ ԿՈՎԿԱՍՑԻՆԵՐԻՆ

Ամեն անգամ, երբ մենք կարդում ենք
մի որ և է սխալ տեղեկութիւն մեր երկ-
րի և մեր երկրում ապրող ժողովուրդնե-
րի մասին, մենք վրդովւում ենք և զար-
մանում օտարազգիների տգիտութեան վրա
մեր երկրի մերաբերութեամբ: Սակայն մի
հարց տանք մեզ. արդեօք մենք՝ կովկաս-
ցիներն, ճանաչում ենք մեր երկրը և
կովկասում ապրող զանազան ազգութիւն-
ները: Օրինակ, մենք՝ հայերս, կարգին ծա-
նօթ ենք կովկասեան բազմաթիւ ազգերի
լեզուի, կենցաղավարութեան, ազգագրա-
կան առանձնատարածութիւնների հետ:

Դժբաղդաբար ոչ:
Մենք ոչ մի գաղափար չունենք կովկա-
սեան լեռնականների մասին: Աւարներ,
չերքէզներ, չեչեններ, արխաններ, խինա-
լուցիներ, կուսուներ, կազիկուներ, կու-
ներ, արաղցիներ, մեցեր, բոթիկցիներ և
ուրիշներ, որոնք ունեն առանձին լեզուներ,
նոյնքան յայտնի են մեզ, որքան Աֆրի-
կայի ազգերը: Մինչև այժմ չը գտնվեց մի
հայ գիտնական, որ հետաքրքրվէր այդ
ցեղերի ազգագրական և լեզուագիտական
առանձնատարածութիւններով և նուիրէր ի-
րան նրանց ուսումնասիրութեան: Մենք
նոյն իսկ բաւականաչափ ճշգրիտ տեղե-
կութիւններ չունենք մեզ աւելի մօտ և
աւելի խոշոր ազգութիւնների մասին, ո-
րոնց հետ յաճախ շփուում ենք, ինչպէս
են քիւրդերը, այսօրները, թաթերը,
վրացիները և թիւրքական զանազան ցե-
ղերը: Այդ ազգերից մի քանիսի հետ մենք
ունեցել ենք բարեկամական և թշնամա-
կան յարաբերութիւններ մեր անցեալում,
իսկ ապագայում աւելի սերտ շփման մէջ

պէտք է գտնվենք իբրև մի երկրի բնա-
կիչներ, որոնք պէտք է ձգտեն համերաշխ
և փոխադարձ զործունէութեամբ բարձ-
րացնել երկրի կուլտուրական զարգացման
գործը:

Ահա հարկւր տարի է, որ սկսվել է
մեր երկրի միացումը ուսաց պետու-
թեան հետ: Տանիններորդ դարի ըն-
թացում առաջ էր գնում այդ միացման
գործողութիւնը, նա սկսվեց Վրաստանից,
յետոյ անցաւ Արաքսի աւազանին, Դա-
ղստանի լեռներին և վերջացաւ Կարսի և
Բաթումի նահանգների միացմամբ: Կով-
կասում ապրող ազգութիւնների համար
խաղաղ և ընդհանուր քաղաքացիական
կեանք հաստատվելու գործի հետ զուգըն-
թաց կարելի էր դառնում ազգագրական
և կենցաղավարական ուսումնասիրութիւն-
ների արդիւն: Սակայն այդ ապագայում
մինչև այժմ մենք ոչինչ չենք իրագործել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յ՝, Ձ Ա Յ Ն

Ներսիսեան դպրոցի համար վեց աշխարհա-
կան հոգաբարձուների ընտրութիւնը վերջաց-
նելուց յետոյ պէտք էր գտնուէր բերել կղերա-
կան ոգու ստեղծած նորութիւնները, ընտրել
տալով երկու հոգաբարձու յատկապէս քահա-
նաներից, քահանայական ժողովի մէջ: Հոկ-
տեմբերի 16-ին, երկուշաբթի, կայացաւ այդ ժո-
ղովը և ընտրվեցին երկու քահանաներ:

Մշակիչ ներկայ համարում ընթերցողները
կը գտնեն այդ ընտրութեան նկարագրութիւնը
և կը տեսնեն, որ մենք զուր չենք սկզբից
և եթ անդադար կրկնում, թէ ներկայ հոգա-
բարձական ընտրութիւններ կազմակերպողնե-
րին ղեկավարել է միմիայն ձգտում—«սարքել»
ընտրութիւնները՝ իրանց ցանկացած նպատա-
կին հասնելու համար: Աշխարհական հոգաբար-
ձուների ընտրութեան մէջ այդ «սարքողները»
կատարելապէս չարդիւնեցան. նրանց չարդիւն-
նոյն իսկ ամենաթիւն է ավողութիւն անգամ
այսպէս: Ուրիշ բան էր քահանայական ժողովը.
սարգել, ինչպէս տեսնում էք, ճշնամբերը,
ներշնչումները իրանց գործը տեսան և «սար-
քելու» գործը աւելի քան ավող անցաւ:

Նայենք հայ ժողովուրդին և հայ եկեղեցուն

խորթ կղերական ոգու սարքած այդ ժողովին:
Հրաւիրված են եւ մասնակցում են ընտրու-
թեան ոչ միայն քահանաներ, այլ և վարդա-
պետներ, թէեւ վարդապետ և քահանայ այն-
պիսի անուններ չեն, որ կարելի լինէր նրանց
չիտել: Ներկայ եղողները միայն թիֆլիսի քա-
նաներն են, այլ եկել են հոգեւորականներ
նաեւ Գանձակից, Գորուց, Ախալցխայից, Թող-
մազ չառնի թէ այդպէս էլ հարկաւոր էր, որով-
հետեւ ներսիսեան դպրոցը թեմական դպրոց
է, միայն թիֆլիսի չէ պատկանում, այլ ամ-
բող թեմին: Մենք ամենամեծ ուրախութեամբ
կը վերաբերվէինք ընդհանուր թեմի ընտրու-
թեան մտքին, բայց ներկայ դէպքում այդ
սկզբունքի նշոյն անգամ չը կայ. նախ այն
պատճառով, որ աշխարհական հոգաբարձուներ-
ը ընտրութեան մէջ թեմը ոչինչ մասնակցու-
թիւն չէ ունեցել, իսկ դա ամենամեծ և ամե-
նապարզ նշանն է, որ ընտրութիւնը մասնա-
ւոր է, միայն թիֆլիսի վերապահված. և երկ-
րորդ՝ գաւառից եկած հոգեւորականները չեն
ընտրված գաւառի քահանայական դասակարգի
կողմից, այլ նշանակված են թեմական իշխա-
նութեան կամքով: Մեր ժամանակը ճշնամբ-
կովիւնների ժամանակ է, և ընտրութեան
սկզբունքը միայն պատրուակ է այն մարդ-
կանց համար, որոնք կղերական կաստա ստեղ-
ծելու ետեւից են և աշխատում են ժողովուրդի
իրաւունքների վերջին փշրանքներն էլ խլել:

Քահանայ-հոգաբարձուների ընտրելու կար-
գադրութիւնը հրատարակվելու օրից մենք ա-
սել ենք շատ անգամ, որ կարգադրութեան ամ-
բող նպատակը այն է միայն, որ հոգաբար-
ձական կարգի մէջ կղերականութիւնը առա-
նայ գերակշռող դիրքը, որ ձայների մի յայտնի
թիւ միշտ ապահովապէս հոգաբարձութեան
նախագահների ձեռքին լինի. էլ միմիայն քա-
նաներն չունենաւ միանգամայն չնչիւ դպրոցա-
կան ինքնավարութիւնը և ամեն ինչ տալ
վարդապետներին ձեռքը. դրա փոխարէն հրա-
պարակ նետվեց կարմիր թիւերով կարած մի
«փոխթիւ»—պարտաւորական դարձնել քա-
հանայ-հոգաբարձուների ընտրութիւնը: Բայց
ինչպէս պարտաւորական դարձնել Երեւանում
«փոխթիւ» ջարդվեց փառաւոր կերպով,
որովհետեւ թէ ժողովուրդը ընտրութիւնների
միջոցին ցոյց տուեց, որ քահանայ ընտրելը
կամ չընտրելը իր իրաւունքն է և թէ քահա-
նաները չտապեցին իրանց հրաժարականով
յայտնել կղերական «փոխթիւ» հեղինակ-

ներին, որ իրանք չեն կամենում ժողովուրդի

միջոց դուրս չարտօնված մի կաստա դառնալ:
Երեւանի օրինակը, ի հարկէ, մեծ անհանգս-
տութիւն պիտի պատճառէր թիֆլիսի կղերա-
կաններին: Այստեղից էլ միմիայն հրահանգ
տուին, որ քահանայ հոգաբարձուների ընտրու-
թիւնը ժողովուրդին չը թողնվի, ինչպէս էր
Երեւանում, այլ վերապահվի քահանայական
դասին: Այդպէս էլ եղաւ: Եւ ահա բացվեց մի
տեսարան, որ մեր պատմութեան մէջ անօրի-
նակ է. հաւաքվում են աշխարհականները ա-
ռանձին, հաւաքվում են քահանաները առան-
ձին, ընտրութիւններ կատարելու համար: Երբ
է այդպիսի բան նկատվել հայերի կեանքում.
նոյն իսկ եկեղեցական ժողովներին, որոնք վրձ-
նում էին զուտ կրօնական-դասաւարանական
հարցեր, մասնակցում էին աշխարհականները:
Այժմ, ղեկավարնութեան, բնակչիցի օրե-
րում, սպանվում է ժողովրդական սկզբունքը,
մեր կղերը այնքան առաջ է գնում իր
հակաժողովրդականութեան մէջ, որ բաժա-
նում է քահանային իր ծխականից, կազմում է
քահանայական կաստա, պառակտում է հօտի
միութիւնը, մոյցնելով հոգեւորականի և աշ-
խարհականի մէջ շահերի տարբերութիւն, դա-
սակարգային խտրութիւն: Եւ ամբողջ թիֆ-
լիսի մէջ չը գտնվեցան քահանաներ, որոնք
փորձէին հասկացնել, թէ իրանք հովիւներ են
և ոչ թէ առանձին դասակարգ կազմող քուր-
մեր, որ իրանց կոչումն ու պարտքը ժողովուրդի
հետ և նրա մէջ լինելն է և ոչ թէ հակադիր
ոյժ, օպոզիցիոն կազմելը, որ հայ եկեղեցին
միակ ոյժ եթէ կարող է ունենալ—դա ժողո-
ւրդականութիւնն է:

Քանիդե, քայքայել են այդ ոյժը. քանիդե
են և այժմ: Քանիդե է կղերական ոգին: Եւ
ինչու: Որպէս զի հոգաբարձական ժողովներում
ունենան ապահովապէս Յ՝, ձայն:
Այսպէս էլ կարճամտեղից պատմութեան
համար: Մենք կը տեսնենք թէ ինչն են ա-
նում այդքան մեծ գնով ձեռք բերած Յ՝, ձայ-
ները. կը տեսնենք թէ ինչ հետեւանքների կը
հասցնէ սպառաւիրված կղերականութեան ո-
գին: Եւ մենք կարճամտեղից ամեն ինչ, հան-
գիստ լինելով մեր խղճի տառջ, որ անկուս-
կալոր և խնայողութեամբ եւսանալով առաջ տան-
ող ժողովուրդը չէ, այլ հոգեւորականու-
թիւնը...

ԲԱՆԱՍՏԵՂԵՐ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՑ

Ներկայ ցուցահանդէսը այնքան ընդարձակ է
և ևս լայնածաւալ, այնքան բազմակողմանի է
և հետաքրքրական, որ մարդ գիտարանում է
և չը գիտէ որքան գրել և որքան թողնել: Մշակիչ
թղթակից պ. Անդրանիկի վերջին նամակները
ներկայում էին Տրոյապոլիսի մէջ: Զենք այդ-
տեղից էլ կը շարունակենք:

Տրոյապոլիսի երկու մեծ շինութիւններ յատ-
կացրված են անգլիական գաղթականութիւն-
ներին. մէկը գրեթէ ամբողջապէս նուիրված է
Կանադային, միւսը՝ հնդկական ոճով շինած մի
շքեղ պալատ՝ Հնդկաստանին և Յէյնսի կղզուն:
Կանադան այնքան հետաքրքիր երկիր է, նրա
քաղաքական և հասարակական կազմակեր-
պութիւնը, նրա ժողովրդի ներսը ու կացը,
կրթութեան գործը այնքան խրատական են
և արժանի ուսումնասիրութեան, որ մենք
հարկ համարեցինք քիչ երկրորդ կանգ առնել
այստեղ, մանաւանդ որ այդ երկրը մեզ շատ
չատերիս գրեթէ անծանօթ է:

Կանադան պատկանում է բրիտանական բազ-
մաթիւ կոլոնիաների այն կարգին, ուր տիրում
է բոլորովին անկախ, ինքնուրոյն տեղական
առանձնադրութիւն, ուր մայր երկրի կենտրո-
նական կառավարութիւնը ոչ մի ազդեցութիւն,

ոչ մի դեր չէ խաղում և իրաւունք էլ չունի:
Նա թէեւ մի գաղութ, թէեւ օտարապատակ
մի երկիր, բայց և այնպէս վայելում է ամե-
նալայն ինքնավարութիւն. ունի իր սեփական
ազատ պարլամենտը, իր անկախ, ինքնուրոյն
միջնորդութիւնը և այլն: Երկու երկրներին
մէջ գոյութիւն ունեցող միակ կապը, միակ օ-
ղակը՝ դա Կանադայի ընդհանուր նահանգա-
պետն է, որը նշանակվում է կենտրոնական
կառավարութեան կողմից: Նա թէեւ բրիտա-
նական թագուհու ներկայացուցիչն է, բայց ոչ
մի ազդեցիկ դեր չէ խաղում: Որպէս մայր
երկրում թագուհին, ըստ անգլիական սահմա-
նադրութեան, գրեթէ չէ վայելում ոչ մի իրա-
ւունք, ոչ մի գերիշխող դեր, և երկրի կառա-
վարողը, նրա ներքին և արտաքին քաղաքակա-
նութեան մի որոշ սղղութիւն և տօն տուողը
պարլամենտն է և իր միջոց ընտրած մինիս-
տրութիւնը, —նոյնպէս և Կանադայում երկրի
իսկական տէրը, նրա օրէնսդիր և գործադիր
մարմինը տեղական ժողովուրդի ընտրած պար-
լամենտն է և մինիստրութիւնը, որը պատաս-
խանատու է ոչ թէ թագուհու ներկայացուցչի
առջև, այլ միմիայն կանադական պարլամեն-
տի՝ այսինքն ժողովրդի առջև:

Կանադայի կառավարութեան ձեւը՝ դաշնա-
կութիւն է, բաղկացած ութ նահանգներից, մէ-
կը միւսից անկախ, ճիշդ այնպէս, որպէս Շվեյ-
ցարիայի կանտոններն են: Դաշնակցական և
ինքնավարական սկզբունքը նահանգներից սկը-
սված տարածվում է գաւառների վրա, գաւառ-
ներից քաղաքների և գիւղական համայնքների
վրա. իւրաքանչիւր գիւղական համայնք՝ թէ-
կուզ նա բաղկացած լինի միմիայն 750 հոգուց,
ունի իր ինքնուրոյն խորհրդարանը, իր ընտրած
օրէնսդիր և գործադիր մարմինը:

Քաղաքական այդ ազատ բեմի վրա չնորհիւն է,
որ Կանադան այսօր մեզ ներկայանում է, որ-
պէս մի քաղաքակրթված, կուլտուրական, մի
բարեբեւ երկիր, որի խօսուն վկան է Տրոյա-
պոլիսի մէջ չինած նրա պարզ, անպատճառ, բայց
ընդարձակ, ճոխ և հարուստ պալատը: Մենք
չենք նկարագրի այդ պալատի բոլոր դահլիճ-
ները և դալլիւնները. այդ մեզ շատ հետա-
կր տանք. այլ կը բաւականանանք ամենա-
գլխաւորներով: Մենք նախ ձեռք կուղարկենք
այդ պալատի երկրորդ յարկի մի մեծ դահլիճը.
դա յատկացրած է ժողովրդական կրթութեանը.
Այդտեղ ցոյց են դրված դպրոցական ձեռնարկ-
ներ, գրքեր, ջարտեղներ, երկրագունդ... աշա-
կերտական տետրակներ, նկարներ, ձեռագործ
ներ, վերին աստիճանի յարմար աշակերտա-
կան նստարաններ և այլ դպրոցական պարա-
գաններ: Այդտեղ ցոյց են դրված մի-մի օրինակ
և այն բազմաթիւ հրատարակութիւններ, ո-
րոնք լոյս են տեսել Կանադայում: Այդտեղ
գտւել կարող էք ձեռք հաշիւ տալ մի փոքր գա-
ղափար կազմել այն առաջադիւսութեան մասին,
որ արեւ են կանադացիները ժողովրդի ընդհա-
նուր կրթութեան ասպարէզում:

Այժմ թող թեւերը խօսեն: Հինգ մի-
լիօն, միմիայն 5 միլիօն բնակչւն ունեցող
Կանադան ունի 17 համալսարան, 65 միջնա-
կարգ կոլլէժներ, 318 պանսիօնատ (աղջիկ-

րանց) և 17,558 դպրոցներ: Երկու սեռի ու-
սանողների թիւը՝ 1,107,084, որոնցից 26,845-ը
բարձրագոյն և միջնակարգ դպրոցներում: Այդ
1,107,084-ը կազմում է դպրոցական տարիք
(5—20) ունեցող երկու սեռի երեխաների թիւի
66 տոկոսը: Հարեւան Միացեալ-Նահանգնե-
րում 1897—1898-ին 70 տոկոս է եղել: Կա-
նադայի ամենամեծ համալսարանը Մօնտրեալ
քաղաքին է, որը ունի մօտ 16 միլիօն ֆրան-
կի անշարժ կայք. բացի այդ 15,000,000 ր. էլ
դրամագում: Նրա հիմնադիրն է մի հարուստ
մօնտրեալցի, որի առատաձեռնութեան շնորհիւ
այդ հիմնարկութիւնը անցել է առաջնակարգ
համալսարանների շարքը: Ժողովրդական կրթ-
ութեան համար դաշնակցական կառավարու-
թիւնները ծախսում են 50 միլիօն ֆրանկ, կամ
իւրաքանչիւր բնակչի համար 9 ֆրանկ: Միա-
ցեալ-Նահանգները ինտելլիգենտ ծախսում են
14 ֆրանկ (տարեկան մօտ 400 միլիօն ռուբլի):

Քանի որ մեր խօսքը ժողովրդական կրթու-
թեան մասին է, մի երկու բառ էլ ժողովրդի
մի այլ գաղափարակի՝ մամուլի մասին: Մի եր-
կիր, որի բնակիչների թիւը հազիւ 5 միլիօն
է կազմում, ունի 1219 պարբերական օրգան-
ներ, որոնցից 113 ամենօրեայ, 855-ը շաբաթը
երկու և մի անգամ հրատարակվողներ, 251
կիսամսեայ և ամսական հրատարակութիւններ:
Այժմ անցնենք ժողովրդի դրամաւորներին:
Սովորաբար ընդունված է Կանադան ցուրտ
երկրներէ շարքում հաշիւը: Մասամբ այդ ճիշդ
է թուում, մանաւանդ երբ դուք այցելում էք
նրա մուշտակապոծութեան արդիւնքների գե-

ՔԱՀԱՆԱՅ-ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒ-
ԹԻՒՆԸ

Նոյեմբերի 16-ին երկու հոգաբարձու-քահա-
նաների ընտրութիւնը կատարվեց Թիֆլիսի
առաջնորդի նախագահութեամբ, տարօրինակ
ձևով եւ միանգամայն ճշման տակ:

Անտես անվեցին ընտրութեան մասին հրա-
տարարված «կանոններ» 4, 12, 13, 18, 29 եւ
31 յօդուածները, այն է ներկայ էին սինո-
դից դատաւարական անձինք, ներսիսեան
դպրոցում ուսուցչութիւն անող քահանաներ,
կային տիրացունք եւ աշխարհականներ, ու-
րոնք շատ էին քիչիւմ սրա-նրա ականջին:
Ընտրելիներ չառաջարկվեցին եւ նրանց կամքը
չը հարցրին, արդեօք կամենում են քուէարկ-
վել Մասնակցեցին ոչ միայն քահանաներ, այլ
եւ կուսակցութիւններ: Փութատուրի չը դրվեցին,
ընտրութիւնը կատարվում էր Թերթիկներով
եւ Թերթիկները կարգաց ինքը, նախագահը,
որ լաւ ճանաչում է քահանաների ձեռքը:

Գործակալները եւ նրանց արքանականե-
րը հրաւիրութիւններ վրա ստորագրել տալու
ժամանակ ներշնչել էին, ինչպէս քահանանե-
րից ոմանք խոստովանեցին, Թեմակալ առաջ-
նորդի Թեմակալների անունները: Չը թողա-
տելով ոչինչ առարկութիւն, նախագահը բա-
ժանեց Թերթիկներ եւ պատուիրեց գրել երկու
անուն՝ ասելով «ով շատ ձայն կը ստանայ, նա
կը լինի հոգաբարձու»: Փութարկողներ թիւը
հասնում էր 52-ի: Միայն Փիւտ քահանայ Ա-
ղանեան ստացաւ կէսից աւելի ձայն, իսկ հո-
գեւոր իշխանութեան Թեմակալները հրատա-
րարված Գործող քահանայ Տէր-Բարսեղեան եւ
Դեմոք քահանայ Սարգսեան սեւացան: Առա-
ջարկվեց երկրորդ անգամ քուէարկվել եւ այս
անգամ պատուիրվեց թեմակալ ընտրել միայն
Տէր-Բարսեղեան եւ Սարգսեան քահանաներին
եւ այդ երկուսից մէկին ձայն տալ: Դարձեալ
սեւացան երկուսն էլ: Երրորդ անգամ պատ-
ւիրվեց քուէարկել դարձեալ այդ երկուսին:
Այդ ժամանակ ձուղորեան քահանան խօսք
խնդրելով, նախ բողոքեց, որ կուսակցութիւնը
մասնակցում են ժողովին, ապա յայտնեց իր
բազմաթիւ քահանայի մասին ոչ նպատակաւոր
կարծիք, թելով միաժամանակ նրա կատարած
զեղծումները ներսիսեան դպրոցում, որոնց մա-
սին լրացրութիւնը խօսեց իր ժամանակին եւ
վերջապէս յիշեցրեց նաեւ Յորդանանի կամուր-
ջի պատմութիւնը, սինոդից նրա դատաւարա-
կան լինելը: Բայց նախագահը լռեցրեց ձու-
ղորեան քահանային ասելով, թէ ինքը վաղ-
օրք ստուգել է եւ գիտէ, որ Սարգսեան քա-
հանան այդպիսի բաներ չէ արել: Այդ ժամա-
նակ ժողովականներից շատերը հեռացան: Վեր-
ջապէս երրորդ անգամ պատուիրվեց քուէարկել
Սարգսեանին եւ այս անգամ նաոր հեղա եւ
զոդներ իկտից աւելի մի ձայնով ընտրել տալ:
Իսկ ձուղորեան քահանայի վերաբերմամբ
պատուիրվեց գործակալին արձանագրութիւն
կազմել, իբր թէ նա վերաբերել է տէր-Դե-
մոքին:

զեցիկ բաժինը, որը կազմում է նրա բազմա-
թիւ հարստութիւններից մէկը: Նրա գետնաշն-
քի, սամայրի սքանչելի մուշտակները, սպիտակ
եւ սեւ արջ, սպիտակ կղաքիւս, ջրաղուէն եւ
այլն բնութեւն են երկու դարկիւն: Բայց երբ դուռ
դէնքերի բաժինը՝ խնձոր, տանձ, դեղձ, խա-
ղող եւ այլն, որոնք կարող են լինել միայն մի
մեկը կլիմայի արտադրութիւն, դուռ ստիպ-
ված էք ընդունված կարծիքից քիչ չեղվել:
Շնորհիւ այդ կլիմայի, շնորհիւ մասնաւոր կա-
նադայի անսահման լայնատարած եւ արդա-
ւանդ հողերին, կանադացիները գլխաւորապէս
զբաղված են երկրագործութեամբ: Այդ երկրի
տարածութիւնը 3,676,246 քառակուսի մղոն է,
գրեթէ 8,767,000 քառակուսի կիլոմետր է,
Ֆրանսիայից 16 անգամ մեծ... Կանադայի ան-
հուն դաշտերը եւ կուսակալ անտառները գրե-
թէ առաջադիւական են դարձել: Նրանց գեղե-
ցիկ լանդշաֆտը, հրաշալի տեսարանները ներ-
կայացնող նկարները գրաւում, բեւեռում են
ցուցահանդէսի բոլոր այցելուներին ուղեն ու
միտքը: Դեռ ոչինչ տարածութիւն մնում է
անմշակ, անմեղմանիւն: Նրա ցուցահանդէսի
նշանաւոր մասը յատկացված է երկրագործու-
թեան արդիւնաբերութիւններին. մասնաւոր
աչքի է ընկնում երկրորդ յարկի մի մեծ դահ-
լիճ՝ հացաբոյսերով չեղագէտ զարդարած: Դա
արդէն հասած հացաբոյսերի բարակ խուրճիկից
չինչ եւ նկայ վնջիւր են, իւրաքանչիւր. փնջի
ներքեւ՝ բոյսերին համապատասխան սերմեր,
էֆֆէկտը հիւսնայի է: Այդտեղ կայ ցորեն,
վարակ, գարի, եգիպտացորեն եւ այլն կա-

Չը մոռանաւ ասել եւ այն, որ այս ընտրու-
թեան համար բերված էին եւ դրսից հոգեւո-
րականներ, վարդապետներ եւ գործակա-
լներ, օրինակ, Գորոց, Ախալցխայից, Գանձա-
կից, որոնք եւ մասնակցեցին ընտրութեանը:

Ավանտես

ՄԵՐ ԳԱՒԱՌՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Այս անգամ ամառ եւ ինչպէս բնիկ սինո-
ցի հնգամեայ բաղադրութիւնից յետոյ այ-
ցելեցին Ձանդեգուր գաւառի մի քանի տեղեր,
ի թիւս այլոց եւ Սիւխանը՝ հեռաւոր Ձանդե-
գուրի այդ հեռու գաւառամասը: Ահագին
տարբերութիւն գտայ Սիւխանի մօտիկ անցնա-
լի եւ ներկայի մէջ. ազգաբնակչութիւնը վերին
աստիճանի չքաւորութեան մէջ, գողերի եւ
վաշխառուների ձեռքում՝ ճնշված եւ հարստա-
հարկված եւ՝ ինչպէս միակ եղբայր կեղեքում-
ներից՝ շատերը օտարութեան գիւծած:

Սիւխանի նման հացաշատ միայն, որ առաջ
հաց էր մատակարարում հարեան երկրինե-
րին, այժմ սովի է մատնված եւ արեւստակա-
նով, որը առաջապէս եւն անյալ վաշխառու-
ները, խլելով դեռ կալումը պարտատէր գիւ-
ղացիների ընտանիքի տարվա պարէնը, նորից
նրան մեծ վերադիմանքով տալու համար: Ոչ
մի նարի, ոչ մի ֆեարամ այն ձեռքները չեն
հասցրել խաղաղ շինականին, ինչ պատճառով
են այժմ դրսից գտող ձեռքերը, իսկ ներսից
սրկալից վատթար լազարները, Բաղդասար-
ները, Ջիւրայիները եւ Թաճաճները:

Սիւխանի գիւղերում ապրում են մի կարգ
ուրիշ տեսակ վաշխառուներ. դրանք փողի հետ
գործը չունեն, այլ դրանց գործը բնական բեր-
քերով է եւ գլխաւորապէս հացաւորներով:
որը կալումը հաւաքում են՝ ամբարում եւ
ձմեռվա վերջերից սկսում քաղցածներին բա-
ժանել մէկին իկա վերադիմանքով, այսինքն 10
սօմար վերջնորդ 4—5 անսլայ ընթացում
պիտի վերադառնէ 15 սօմար, այն է հինգ
ամսվա ժամանակին 50 տոկոս, իսկ ամբողջ
տարվա համար 100 տոկոսից աւել: Աւելաց-
րէճ արա վրա եւ մի շարք անբերրի տարիներ,
գողութիւններ, այն ժամանակ հասկանալի կը
դառնայ գիւղացու թշուառ վիճակը եւ օտար
երկրներում աշխատանք ձեռք բերելու ան-
խուսափելի կարիքը: Կրկնում եւ, գողութիւնը
եւ վաշխառութիւնն են գիւղացուն յաճախ
դռնէ դուռը գցում՝ Բագու, Սիւքաղաք, Բա-
լախանի եւ Անդրկասպեան երկրները, ուր
նա անսովոր կլիմայում, վատ կենցաղավարու-
թեան մէջ կամ փչանում է կամ հիւանդացած
եւ գիւղատնտեսական պարագլուխներին
ընդունակ դարձած տուն է վերադառնում. դեռ
չկա ստույգ հայանդամ դառնալու այն բազ-
մաթիւ դէպքերը, որոնց ենթարկվում են այդ
թշուառ «սեւ» մշակները միլիոնատերերի գոր-
ծարաններում՝ դանազան ծանր ու դժուար
գործեր կատարելիս, մեքենաներ պտտեցնելիս:

Դեռ Բագուի երկաթուղու կայարանից օտքը
դուրս չը դրած, պատահում էք հարեւորաւոր

մշակների, գրաստի նման համեմատներ մէջքնե-
րին դրած: Հարցրէք նրանցից եւ դուք կը
տեսնէք, որ դրանց մեծամասնութիւնը Սի-
սիանից է՝ Ուր, Անգեղակոթ, Ալիլլու, Շա-
ղաթ, Մաղաղ եւ այլ գիւղերից, որոնք ան-
վճարելի տոկոսներով փող կամ ցորեն են
պարտ մաղրեցի վաշխառուներին, որոնք այդ
հետեւ եւ խուլ անկենում հարկու հազարներ
են դիզել՝ անյալ ազանութեամբ ծծելով հարե-
ւանների արեւը եւ գեղելով նրանց օտարութիւն:
Պարտական գիւղացիները՝ հեռու երկիր
փախելով անգամ, ազատ չեն մնում իրանց
«բարեբարների» այցելութիւններից. վաշխա-
ռուները յաճախ գիւծում են Բագու եւ միւս
տեղերը, գտնում պարտական գիւղացիներին,
տոկոսով լրիւ պարտքերը ստանում են եւ դեռ
ճանապարհածախսն էլ նրանց չլինքին դնում:
Վաշխառուների Բագու գնալն էլ մի սովոր-
ութիւն է դառել արդէն Ձանդեգուր գաւառի
մի քանի տեղերում:

Նիկ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, հոկտեմբերի 14-ին

Թիֆլիսի Քանոնացի հարուստ եկեղեցին մի
քանի շահաւէր երէցփոխների համար ապրու-
սի եւ հարստանալու միջոց է եղել եւ դրանք
շատ դժուարութեամբ էլ բաժանվել են այդ
արդիւնաւոր պաշտօնից: Բանը նրանումն է, որ
այսպիսիները նոյն իսկ խրախուսանք են գտել
հոգեւոր իշխանութեան կողմից. այսպէս ինչ-
պէս բացատրել այն հանգամանքը, որ այդ ե-
կեղեցու նախկին երէցփոխ պ. Ջալալեանցի
41/2 տարվա գործունէութեան մասին ոչ մի
անգամ հաշիւ չը պահանջվել ճանդերձ, նոր
ընտրութեան գործն էլ դեռ դանդաղեցնում է-
ին՝ անմեղման ուղի չը դարձնելով լրացրական
աղմուկներին: Միայն այժմ են սկսել իւրա-
քանիւր երեք ամսում հաշիւ պահանջել նոր
երէցփոխից: Հոգեւոր իշխանութեան այս նոր
ընթացքը օրաօրային հանգամանք է, եթէ մի-
այն ընդհանուր լինի եւ յարատեւ: Սակայն
ինչ պիտի տէ նա պ. Ջալալեանցի օրով ան-
յայտացած մի պատկանելի գումարի մասին:

Նոր երէցփոխ պ. Վարդապետեան իր նա-
խորդից՝ պ. Ջալալեանցից յանձնված հաշիւ-
ներից արդէն նկատած եւ հասկացած է եղել,
որ նրանք անխնայ են եւ մէջտեղը անազին
գումարի կորուստ է երևում. ուստի հաշուե-
տենները համաձայնութեամբ հրաւիրել է մի
մասնագէտ հաշուապահ եւ յանձնում վերջի-
նիս քննելու պ. Ջալալեանցի հաշուեմատենա-
ները: Ուղիղ երեք ամիս աշխատելուց եւ չար-
չարկելուց յետոյ պ. հաշուապահը գտնում է, որ
պ. Ջալալեանցի հաշիւներից պակասում է
8504 ռ. 23 կոպէկ: Այս հանդամանքը հաշե-
տենների ժողովում յայտնվում է պ. Ջալալեան-
ցիին վերջինս խնդրում է մի ուրիշ մասնագէ-
տի ձեռքով կրկին ստուգելու հաշիւները: Բայց
այս անգամ էլ նոյն գումարի պակասութիւնն է
նկատվում. եւ պ. Ջալալեան խոստանում է
լրացնել պակասած գումարը. բայց թէ երբ եւ
ինչպէս՝ այդ չը պիտենք:

Միական

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, հոկտեմբերի 17-ին, Թագաւոր կայարի

ներք. 1898 թւին միմիայն Անգլիան ստացել է

1,741,000 տոնն փայտ...

Եթէ մենք աչքի տալ ունենանք, որ այդ
անտառների ամբողջ կէտը բաղկացած է սպի-
տակ եւ սեւ եղեւնուց (Picea alba եւ Picea
nigra), այն ժամանակ նրանց արժէքը աւելի
եւս է բարձրանում: Եղեւնու կաղամասից են
պատրաստում թուղթը: Ըստ նորագոյն հետա-
գոտութիւնների Կանադայի ունի 4,500,000,000
տոնն փայտի կալիւմատ: Այդ փայտը, նրանից
ստացած կաղամասը ցոյց են դրված պալատի
մի դահլիճում. այդտեղ են եւ կալիւմատայի
արտադրած նախ հաստ, կոպիտ. ապա բարակ,
նուրբ թղթի նմուշները. նմուշներ այն բոլոր
ֆազիւնների, որոնցով անցնում է թղթի պատ-
րաստութիւնը, փայտը թղթի փոխելու էլօ-
լիւցիան... Շնորհիւ իր անհուն, անսահ-
ման անտառների, անտառների, որոնց շատ
չափերին դեռ չէ դիպել փայտահատի կացինը
կամ օղոցը, շնորհիւ մասնաւոր նրանց բարձր
յատկութեանը, Կանադան ոչ միայն առաջին
երկիրն է pulpier-ի փայտ արտադրելու մէջ,
այլ եւ առաջինը թղթի ֆաբրիկայից գոր-
ծում ամբողջ աշխարհում:

Բայց չաւական չէ ունենալ մի այդպիսի
անընդունակ հարստութիւն, հարկաւոր են եւ մի-
ջոցներ, անհրաժեշտ է ունենալ անազին ոյժ
այդ հում նիւթի փոխել, վերածել գործիքների,
պատրաստել այն, ինչ անհրաժեշտ է մարդուն:
Այստեղ կանադացու օգնութեան է գալիս դար-
ձեալ բնութիւնը. Կանադայի արազնիթաց գե-
տերը, նրա հսկայ լճերը եւ ջրվեժները հոգում,
տալիս են նրան այն ոյժը, որն ստանալու հա-

ազատութեան առիթով Բօրիկ կայարանի մօտ
1888 թւին տեղի ունեցած երկաթուղային
աղէտից, Թիֆլիսի բոլոր դաւանութիւնների
եկեղեցիներում տեղի ունեցան գոհացողական
մաղմանքներ:

Հոկտեմբերի 10-ին Մօսկվայում, Էրմիտաժ
հիւրանոցում տեղի ունեցաւ ճաշ ի պատիւ Պ.
Դ. Բօրորիկինի: Ներկայ էին 110 մարդիկ գեղ-
արուեստական, գրականական եւ գիտական
աշխարհից: Յօրեւարին ողջունեցին ճառերով
Պօլյակի, պրօֆէսոր Ստօրօֆենկօ, Վլ. Նեմիրո-
վիչ-Դանչենկօ եւ պրօֆէսոր Լօպատին: Բօր-
րիկին, իր պատասխան ճառի մէջ, ինչպէս հա-
ղորդում են լրագիրները, ասեց, ի միջի այլոց,
թէ ինչ տանջանքներ է կրել նա գրականական
ասպարէզում: 20 տարի շարունակ նրան ոչ
միայն գրող չէին ընդունում, այլ եւ անինայ
յարձակվում եւ վերաւորում էին նրան, եւ
վերջին ժամանակներս միայն նա գրականու-
թեան մէջ գտաւ իր գործունէութեան ճիշդ
գնահատութիւն:

Հոկտեմբերի 16-ին վրաց սպիտակաշու-
թեան թատրոնում Դալիկի խումբը ներկա-
յարեց Եւքսպիի «Համէտ» ողբերգութիւնը:
Համէտի դերը կատարում էր Դալիկի Շնոր-
հալի դերասան խաղը այդ դժուար դերում
անհասարար էր: Ընդհանրապէս զուրկ լինելով
պահանջված նրութիւնից, նա տեղ-տեղ ա-
ջող էր, բայց յաճախ եւ անբաւարար, մասնա-
ւորապէս օրիշ ողբերգական վայրկեաններին:
Շատ թղթի տղան հանձնարել մեղաւօսութիւն-
ները: Այնպէս որ, որքան էլ խելացի էր խա-
ղում պ. Դալիկի եւ երկրորդ ու երրորդ գոր-
ծողութեան ոչ ողբերգական տեղերում նոյն
խաղ տաղանդաւոր կերպով, անուամենայնիւ
են չը կարողայաւ ստեղծել Դանիայի իշխանի
տիպը, որ ամենաարդիւնքի մէկն է, եթէ ոչ
ամենաարդը բոլոր դրամատիկական անձնա-
ւորութիւնների մէջ: Շնորհալի դերասանին
շատ է խանգարում ձայնը, որ ոչ միայն չունի
այդ տեսակ դերերի համար անհրաժեշտ հըն-
չունութիւնը, խորաթափանցութիւնը եւ զգայ-
մունքները: Խորաթափանցութիւնը եւ զգայ-
մունքները ամբողջ գումարը արտայայտելու
ընդունակութիւնը, այլ եւ խզվածի տպաւո-
րութիւն է գործում յաճախ Դեմքի մկանա-
խաղն էլ շատ աղքատ է եւ անմասնաւորվում
է միայն յոյժերի եւ կոպերի շարժումով, որ
ամ կարծիքով պ. Դալիկի երբեք ի չարն է
գործ գտում: Առհասարակ, մեր կարծիքով, պ.
Դալիկի ստեղծված է բնորոշ դերերի եւ ոչ
թէ ողբերգութիւնների համար, թէեւ այդ տե-
սակ դերերումն էլ հետաքրքիր է շնորհիւ իր
մասնավոր խաղի եւ իր շնորհալի արտաբերու-
թեան: Աւելորդ չենք համարում նկատել, որ
«Համէտ»-ի առաջին եւ վերջին գործողութիւն-
ների մէջ տպաւորութեանը շատ է խանգարում
եւ գլխաւոր կրկնու ձեւը, որ ազեղացնում է
դերասանի գեղեցիկ զուլը եւ գեհնկացնում
է դէմքը, տալով նրան քիչ ինտելիգենտ ար-
տայայտութիւն:

մար հարկ կը լինէր ծախսել հարկուր միլիոններ:
Միմիայն Օտաւա եւ Մաւապա քաղաքների
մէջ 300 վերստ երկաթուղեան վրա գտնվող
ջրի հնագին գորութիւնը հասնում է 1,476,000
ձիւռ ոյժի...

Հանքերը Կանադայի բնական հարստութիւն-
ների մէջ չորրորդ տեղն են բռնում: Բայց նը-
րանք դեռ շատ քիչ են շահագործված: Այդտեղ
պատահում են ոսկի, երկաթ, արծաթ, քարա-
ժուռ, պղինձ, ցինկ, նիկել եւ այլն, 1899
թւականի արդիւնաբերութիւնը եղել է մօտ
270 միլիոն ֆրանկ: Կանադայում ստացվում է
եւ նաւթ. անցնալ տարի գործող նաւթահորե-
րի թիւը եղել է 9000:
Մենք չենք համառօտալի կերպով, գրեթէ
մի հարեւանցի հայեացք գցելով, պատեցինք
Կանադայի պալատը. մենք գրեթէ ոչինչ չա-
սացինք նրա զուտ ինդուստրիական արտադրու-
թիւնների մասին, նրա գեղեցիկ դաշնամուր-
ները, զանազան մեքենաների, հազունտեղեկի
եւ այլն մասին: Մենք գուցէ ամբողջ ունենանք
մասնաւոր լինել նրա մի քանի այլ արտադրու-
թիւնների վրա, որոնք գտնվում են Մարտեան
դաշտի եւ Վենեսիլ բաժիններում: Բայց հէնց
այստեղ ինչեք, որ ցուցահանդէսի ժիւրին ըստ
արժանոյն վարձատրել է Կանադայի ժողովրդի
կազմակերպչական արարչութիւնը, որը
գրած ջանքերը եւ արած առաջադիմութիւնը՝
Նրա պալատի դահլիճները պտտելիս, ուր նա-
յում էք՝ grand prix եւ medaille d'or է:

Ս. Շիւսեանց

Գ ար ի Գ

ընկերուց քիչ առաջ օգնութիւն ստացան իրանքներէն կողմէն: Անգլիացիներէն սպան- ված են 7, վիրաւորված են 11 եւ գերի են առնված 15 հոգի: Կուրս մասնակցող բոլոր բռնիքներ թիւը 15,000-ի է հասնում, որոնցից համարեա կէսը գտնվում է Օրանսեան գետի գաղթականութեան մէջ:

ՇԱՆՔԱՅ: Այրի կայսրուհին յանձնեց մի յատուկ մասնաժողովի ժողովել այն բոլոր գու- մարները, որ կարելի կը լինի ձեռք բերել մի- ջին եւ հարաւային Ձիւնաստանի գաւառական գանձարաններէն:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Կոնցերից ստացված հեռա- գիրը ասում է, թէ մանրագինին հետադարձ- թիւներէն յետոյ երեւաց, որ այն տեղեկու- թիւներ, թէ չենական կառավարութիւնը պաշ- տօնական է արել Նանկինի եւ Սանկուի փոխ- արքաներին նրանց բարեկամական վերաբեր- մունքի պատճառով դէպի օտարերկրացիները, անհիմն է:

17 հոկտեմբերի

Նիւ-Եօրկ: Հոկտեմբերի 16-ին, կէսօրին, Բրոքլին փողոցում տեղի ունեցաւ զարհուրելի պայթում «Տարանտ» քիմիական գործարա- նում: Առաջին պայթումից յետոյ գործարանի շինութիւնը սկսեց վառվել եւ այնուհետեւ տե- ղի ունեցան ուրիշ պայթումներ: Օղակն երկաթուղու այն մասը, որ գտնվում է գոր- ծարանի մօտ, քանդվեց: Լրագիրները սպան- ված եւ անյայտ կորած մարդկանց թիւը հա- մարում են 100-ից մինչեւ 200: Վնասը հա- նում է մէկ ու կէս միլիոն դոլլարի:

ԼՈՆԴՈՆ: Բոքսիտ հաղորդում է, թէ անգ- լիացիներին աջողվել է Պարսի մօտ վերցնել բօքսիտից երկու թնդանոթ:

ՏԵՆԵՔԻ: Այն արշաւաւումը, որ հոկ- տեմբերի 10-ին դուրս էր եկել այստեղից դէ- պի Ռոմանոֆ և Պատի, այսօր վերադարձաւ, առանց թշնամու հետ գործ ունենալու: 4000 «մեծ բոքսիտներ», որոնք, ինչպէս հաղոր- դում են, գտնվում էին Պատիի մօտ, ցրվեցին արշաւաւումը մօտենալու ժամանակ:

Այստեղ երկրի վրէժն, որ ամեն մի ար- շաւումը ուղղված «մեծ-բոքսիտներ» դէմ, ապարդիւն կոչեցին, որովհետեւ նրանք թէ- պէս եւ առաջվայ նման հալածում են քրիս- տոնեայ ընդհանրին, բայց օտարերկրեայ գոր- ճերի մօտենալու ժամանակ թաղանթ են դնե- քերը եւ ցրվում են:

Գիւլի հաղորդում է Պատիֆուից հոկտեմ- բերի 11-ից, թէ վաղըրդէի հրամանի հա- մաձայն՝ բրիտանական զօրքերը վերադառնում են Պեկին եւ Տեանձին, ուր կը հասնեն հոկ- տեմբերի 26-ին՝ գերմանական եւ իտալական զօրքերի հետ միասին գործելու համար: Պեկին վերադարձող զօրքերը գնում են երեք զուգա- հետական զօրատնիկների բաժանված, որպէս զի գերի բռնեն այն «մեծ-բոքսիտներին», որոնց կը հանդիպեն ճանապարհին: Գիւլաւոր զօրախումբը գտնվում է գեներալ Րիչարդսոնի հրամանատա- րութեան տակ: Գեներալ Կեմպելի զօրախումբ յետ է գալիս Տեանձին առանց շտապելու գետի աջ ափով եւ նրա ընթացքի ուղղութեամբ Պա- տիֆուից դէպի Տեանձին: Այս զօրքերը հան- դիպելին «Մեծ-բոքսիտներին» Բենգալիան ու- լանների մի զօրաբաժին, որը հոկտեմբերի 9-ին ուղարկված էր հետախուզութեան, անսպասելի կերպով հանդիպեց «Մեծ-բոքսիտներին» Պա- տիֆուից 30 մղոն հեռու եւ սպանեցին նը- րանցից 20 հոգու: Զօրքերի առողջութիւնը լաւ է:

ԿԱՆՏՈՆ: Գուշփուի չրջանում ապստամ- բութիւնը շարունակ տարածվում է: Կառավար- չական զօրքերը անգոր են: Նրանց օգնական զօրքեր են ուղարկված: Ապստամբների գլուխ են կանգնած գիտնական Սուլ եւ վերանորո- ղիչ Կան-Իւ-Վէի գործակալներից մէկը:

ԼՈՆԴՈՆ: Ամբոխի խուռն բազմութեան մէջ այն ժամանակ, երբ քաղաքի միջով անցնում էին հարաւային Աֆրիկայից վերադարձած կա- մաւորները, սպանվեցին 4 եւ վնասվեցին 140 մարդ:

ՄԱՐԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ՊԱՐԻՋ, Թ. Բ. Անկարդ կը տպագրուի: ԲԵՐԼԻՆ, Թ. Բ. Կարպայցէ վերին պատասխանը: ՇՈՒԵՆ, Ս. Մ.—վաճառական: Հետաքրքրական յօ- դում է, և եթէ մենք չը տպագրեցինք, նախ պատ- ճառն այն է, որ դուք չէք լսելու ձեր իսկական ա- նունն ու աղքատները, և երկրորդ, որ ձեր գրութիւնը անհնարին է պարզ կարգաւ: ՁԱՔԱՐԱՎԱ, Ս. Բ. Տ.—Ի. Ձեր խնդիրը կատարել չենք կարող: ՄԵՐ ԹՂԹԱՎԻՏՆԵՐԸ և ԱՇԽԱՏԱՎԻՏՆԵՐԸ. Խնդրում ենք չուղարկել մեզ կիսատ գրութիւններ. մինչեւ որ և

է յօդուածի շարունակութիւնը չը ստացվի, խմբագրու- թիւնը առանց ուղարկութեան կը թողնէ իրան ու- ղարկված կտորը:

ՈՒՍԱԳՐՈՒ ԲԱՆԿԱՆԻՐ ԲԱՆԿԱՆԻՐ ԱՆԿԱՆԻՐ ԶԻՅԱԲԱՆԻՐ ԻՍՏԱՆԿԱՆ ՄԵԼԻՔ-ԱՆՆԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԿԱՆԻՐԱՅԻՆ ԵՐԿԱՐՈՒՄ (ժամերը Պետերբուրգի հաշուով) տարբերութիւնը 58 րոպէ:

№ 5 գնացքը: № 3 գնացքը:			
Բազումից դուրս է գալիս	Գեր. 3 ժ. 5 ր.	Գեր. 11 ժ. 15 ր.	Գեր. 11 ժ. 15 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս	առ. 8 ժ. 23 ր.	Եր. 5 ժ. 35 ր.	Եր. 5 ժ. 35 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս	Եր. 9 ժ. 3 ր.	Եր. 6 ժ. 30 ր.	Եր. 6 ժ. 30 ր.
Բաթումից դուրս է գալիս	Եր. 9 ժ. 11 ր.	առ. 7 ժ. 10 ր.	առ. 7 ժ. 10 ր.
№ 6 գնացքը: № 4 գնացքը:			
Բաթումից դուրս է գալիս	առ. 8 ժ. 56 ր.	Եր. 10 ժ. 47 ր.	Եր. 10 ժ. 47 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս	Եր. 8 ժ. 42 ր.	առ. 11 ժ. 18 ր.	առ. 11 ժ. 18 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս	Եր. 9 ժ. 22 ր.	Եր. 12 ժ. 36 ր.	Եր. 12 ժ. 36 ր.
Բազումից դուրս է գալիս	Եր. 1 ժ. 25 ր.	Եր. 7 ժ. — ր.	Եր. 7 ժ. — ր.

արագ գնացք			
Շարժել մի անգամ, չորեքշաբթի օրերը:			
Թիֆլիսից դուրս է գալիս	առ. 7 ժ. 56 ր.	Եր. 9 ժ. — ր.	Եր. 9 ժ. — ր.
Բազումից դուրս է գալիս	առ. 6 ժ. 50 ր.	Եր. 8 ժ. 12 ր.	Եր. 8 ժ. 12 ր.
Բաթումից դուրս է գալիս	առ. 6 ժ. 50 ր.	Եր. 8 ժ. 12 ր.	Եր. 8 ժ. 12 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս	Եր. 10 ժ. — ր.	Եր. 10 ժ. — ր.	Եր. 10 ժ. — ր.
Ալեքսանդրապոլից դուրս է գալիս	առ. 8 ժ. 27 ր.	Եր. 12 ժ. 23 ր.	Եր. 12 ժ. 23 ր.
Կարսից դուրս է գալիս	Եր. 4 ժ. 12 ր.	Եր. 4 ժ. 12 ր.	Եր. 4 ժ. 12 ր.
Ալեքսանդրապոլից դուրս է գալիս	Եր. 7 ժ. 40 ր.	Եր. 7 ժ. 40 ր.	Եր. 7 ժ. 40 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս	առ. 6 ժ. 15 ր.	Եր. 6 ժ. 15 ր.	Եր. 6 ժ. 15 ր.


ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԻՐԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ


(Կուրիա, Վորոնցովի արձանի հանգէպ) ա մ ե ն օ Ր, բ ա ց ի կ ի ր ա կ ի օ Ր ե Ր ի ց:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԻՐԱՆՈՑ			
Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վերադառնու- թեան, վերական (թիֆլիս) և միջառան. հրանդ.			
Կ. Մ. Ֆիլովալով—9—10 ժ. աչքի, ներքին և ներքին:			
Բ. Յ. Պրոսպեկտ—12—1 ժ. ալանջի, քիթի, կա- կորդի եւ կրքի:			
Զ. Բ. Բարանսեանց—11—12 ժ. կանանց և երե- յայց հիւանդ.			
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երե- յայց:			
ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՐ			
Բ. Յ. Պրոսպեկտ—5—6 ժ.			
Ա. Ն. Շապուղով—6—7 ժ. ներքին (Երե- տարածութիւն), վերին. և մօրթու:			
Բ. Ա. Նախասարգեան—7½—8 ժ.			
Վճար 50 կ. չքաղաքներ ձրի. Համախորհրդի (Կօն- սիլիումի) և օպերայի համար առանձին:			
Օ. Տ. Առվաբանի—տանը, ծաղկահատ և բժշկ- կական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:			
Հիւանդանոցի վերադառնալ:			
Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԸ			

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ




ԲՕՑԵԱԼՆԵՐ



ԳԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՖԻՍ. ԳԱՐՄՈՒՆԻՄՆԵՐ, ԶՈՒԹԱՆԵՐ, ԳԻ- ԹԱՆԵՐ, ՖԻԼՏՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՐ, ՁԱՅ- ՆԱԽԱՅՏՆԵՐ, ԼԱՐՆԵՐ, ՆԻ ՍՏԻՆ, ՆԻ ՍՏԻՆ:



Բոլոր տեսակ գործիքների համար գի- նը կարելի է վճարել մաս-մաս: ՊՐԵՑԵՍՈՒՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի: ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԻ ՁԱՅՆԱ- ԽԱՅՏՆԵՐ ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

Գ Ե Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Նրաժշտական Ընկերութեան Մուշկալնո Ե. Մ. Միրմանի, ՏԻՖԼԻՍ. Դվորցовая ул., д. Т. Д. З. Банка. 18—20

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԿՐԱՏԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1900 թ. լոյս տեսած գրքերը:

172 Առաջը Լաֆօնթիէի, Թ. Մ. Նուարեանի	1 —
173 Գոնիկի, Օմէշի, Թարգմ. Ս. Մ.	—40
174 Խղճով դատաստան, Թարգմ. Ս. Մ.	—5
175 Հակական նշանագրեր հարթակարի համար, օր. Ե. Պատկանեանի	—80
176 Հոսիսի ձեռնարկը, Ե. Պարսեանի ր. տպ.	1 —
177 Սիֆիլիս, կակուղ շանկը և ստուգանակ, բժշկ. Վահան Արծրունու	—25
178 Մանկական լոտո, հալիքէն, ռուսերէն, վրա- ցերէն և ֆրանսերէն լեզուով, ր. տպ.	1 —
179 Մակարիկա, Ստանիսլավիչի, Թարգմ. Ս. Մ.	—15
180 Թշուառների բարեկամ, փոխ. բժշկ. Վ. Արծ.	—20
181 Խելանկա, Թարգմ. Պ. Հովսեփեանի	—10
182 Արդար ծերունի, Հիւզօյի, Թարգմ. Ս. Մ.	—15
183 Նախ արկածները, Օմէշի, Թարգմ. Պ. Պ.	—10
184 Պատու ծիւղը, Թարգմ. Տ. Սարգսեանի	—3
185 Խնչ է խօսում սենեակը, Թարգմ. Ջ. Տ.—Գ.	—10
186 Միլիտոն, կազմեց Հ. Նուարեանի	—30
187 Մեծապատիւ մուրացկաններ, Տ. Պարսե. ր. տպ.	—40

Վաճառվում են Ընկերութեան օգտին Ազատութեան մասին, Միլի, Թարգմ. Ս. Մ. . . 1 20 Պարսե-Պրոսպեկտի պատկերով 5 Ժողովածու Մոսկվայի հայ ուսանողների . . . 1 — Կորին վարդապետ և Նորին Թարգմանութիւնը, գրեց Նորայր Հ. Յիւզեանցի 1 50 Աղուլեցոյ բարբառը, Ս. Սարգսեանի 2 — Մեղունի, Լ. Լանդարտ, Թարգմ. Ջոկ 15

Կիւմիս, Тифлисть, контора Общества Изда- ния Армянских книгъ (Лорисмеликовская № 11) կամ Tiflis (Russie) Société de la pu- blication des livres Arméniens. 10—10

ՏԻՖԼԻՍԻ ԹԱԳԻՍՏԵԱՆ

Ընդունում է առաւօտան 11—12 ժ. եւ երե- կոյան 5—6 ժ.

Մանագիրտութիւն՝ ներքին եւ երկաթոց հիւանդութիւններ: ՍԵԼՈՎՆԻԿՈՎՍԿԱՅԱ (Большая Кривая), д. Шау- мо- ва, № 18. 10—20

ԲԺԻՇԿ Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի եւ առաջին երկու թիւերի հիւանդութիւնների բժշկութիւնը: Ընդունելութիւնը առաւօտան 10—2 ժ. եւ երեկ. 5—7½ ժ. իր նոր բնակա- րանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վերամիսեան փող. տ. Բարտաշեանի, № 4. [Вельяминовская ул. № 4, домъ Карташанъ]. 25—25

Ա. Փրիդոնեան եւ Ընկ. բանկային գրասենեակը

1900 թ. Նոյեմբերի 1-ի տիրաժից պետական աղետականութեան հոգային բանկի խաղարկութեան գրաւածիցները ապահովացնելու համար վերցնում է մինչև նոր փոփոխութիւն

1 ր. 60 կ. ամեն մէկ տոմսի համար բացի 15 կ. մարկայից, որ վերցնվում է ամեն մէկ անգործագրից: Ապահովացումն հեռագրով կամ վերադրել վճարով գրասենեակը չէ ընդունում: (ամ. 18, 20, 21) 1—3

Անդրկովկասեան Նաւարդիւնաբերական Ընկերու- րեան Վարչութիւնը

սկսելով իր գործունէութիւնը, սրանով յայտարարում է, որ առաջին վճարը ամեն մի մասի 5% որ է տասն բու- լի նշանակած է այս ամսի հոկտեմբերի 14 մինչեւ 18, իսկ երկրորդ վճարը 10%, որ անում է քսան բուլի, նշանակած է նոյեմբերի 1-ից մինչեւ 5-ը: Փողերի ընդունելութիւնը լինելու է վարչութեան գրասենեակում (Пушкинскій Пассажъ верхній этажъ (отъ 10-и часовъ до 2-хъ): (13, 15 եւ 17 հոկ. 1, 3 եւ 5 նոյ.) 4—6

ТРЕБУЙТЕ ВЕЗДЬ ШОКОЛАДЬ СІУ М. 9,730 (2) ФАБР. С. СІУ И К. МОСКВА.

Ս ա ր գ ի ս Վ. Ա ր ր ա ի ա մ ե ա ն

Հասցէ. Սոլջալի, Գանձակայեա փող. տ. Թամաշեւի, № 26, բն. № 9. Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեւի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշ- խաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարագաներ- ներ գտնելու համար

Հ Ա Հ Ո Ւ Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Ւ Ի Ն

- 1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով:
 - 2) Առեւտրական թուաբանութիւն:
 - 3) Առեւտրական թղթակցութիւն:
 - 4) Գեղարդութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ չրիֆտների եւ ուղ- ղումն ամենավատ ձեռքերի:
- Կարելի է տեսնել առաւօտան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երե- կոյան: (չ. ո. չ.) 13—14